ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 23 .04. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Մոսէսքո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 04.02.2021թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **4 152 948,8 (չորս միլիոն մեկ հարյուր հիսուներկու հազար ինը հարյուր քառասուն ութ դրամ ամբողջ ութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 2 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը :

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Մոսէսքո» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան Նար-Դոս 75
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ինեկոբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2050022417711001
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 04214892
ՀՎՀՀ 02522157	տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ	Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
№ ԳՀԱՊՁԲ-21-7/2-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2021թ.
						2-րդ եռամսյակ
1	Էլեկտրամեկուսիչ յուղեր /Տրանսֆորմատորային ԳԿ/	կգ	250	1380	345000	250
2	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /ՄԳՏ/	կգ	400	1614	645600	400
3	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /HVLP-46/	կգ	300	1464	439200	300
4	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /EP-2/	կգ	100	2132.4	213240	100
5	Հիդրավլիկ համակարգերում և այլ նպատակներով օգտագործվող յուղեր /Առանցքակալային յուղ/	կգ	100	1476	147600	100
6	Քսուքներ /Վնիի ՆՊ-282/	կգ	3	214461.6	643384,8	3
7	Քսուքներ /Վնիի ՆՊ-286Մ/	կգ	11	18636	204996	11
8	Քսուքներ /Քսուք ԱՏԼԱՆՏԱ (Վնիի ՆՊ-254)/	կգ	36	38310	1379160	36
9	Քսուքներ /ԱՄՍ-3/	կգ	40	3369.2	134768	40

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

«Մոսէքո» ՍՊԸ
տնօրեն

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ